

Այդ բաժինը անդամները կարող են միանգամայն բերել իւրեանց ընդունուելու ժամանակը, կամ մասը մասը. այս պէպերում ամենափոքր չափը համարվում են ամսական, չորս ամսական և կէս տարեկան տուրքերը, որոնք հաշուով չը պէտք է լինեն ամսական 15 կոպեկից պակաս:

§ 3. Քանի որ մասնաբաժինները գեւ չեն հասել իւրեանց համար որոշած ամենաբարձր սահմանին, զուտ շահի այն մասը, որ նրանց է ընկնելու ընկերութեան գործադրութենից, չի արվում անդամներին ձեռքը, այլ աւելացվում է նոցա վերայ: Իսկ երբ լրանում է ամբողջ բաժինը, շահի այդ մասը դնում է անդամի ձեռքը:

§ 4. Անդամներից ոչ ոք չի կարող ընկերութեան մէջ մի բաժնից աւելի ունենալ:

§ 5. Մասնաբաժնի որ և իցէ կերպով հնազանդը, իբրեւ զբաւ կամ ոչ տեսակ ուրիշին յանձնելը ստիպողական չէ ընկերութեան համար: Որովհետեւ մասնաբաժինները ընկերութեան միւս ստացուածքի հետ միասին կազմում են ապահովութիւնը փոխառուների համար, ուստի և ազատ են ամէն արգելաւորելից թէ արքունի և թէ մասնաւոր:

բ) Պատրաստի գումարը:

§ 6. Պատրաստի գումարի նշանակութիւնն է.

ա) Չորացնել այդ ապահովութիւնը, որ ընկերութիւնը ապիւն է իւր փոխառուներին:

բ) Մեծացնել ընկերութեան գործադրելի գումարը:

գ) Ծածկել պատահական կորուստները զործի տեղում թեան ժամանակ:

§ 7. Պատրաստի գումարը կազմվում է ա) առաջին տարուայ գործադրութեան զուտ արդիւնքից, և բ) յաջորդ տարիքի գուտ արդիւնքի 10%-ից:

§ 8. Պատրաստ գումարի քառորդ մասը պէտք է անմատչելի լինի. մնացեալ երեք քառորդ ընկերութիւնը կարող է շահնել:

§ 9. Բոլոր պատրաստ գումարը պատկանում է ընկերութեանը և միայն ընկերութեան զաղարման ժամանակը կարող է բաժանուել այն անդամների մէջ, որոնք մնացած կը լինեն մինչև այն ժամանակը: *)

Ընկերութեան փոխառութիւնները:

§ 10. Ընկերութեան փոխառութիւնները լինում են երկու տեսակ. ժամանակա-

*) Աւելի լաւ կը լինէր (ինչպէս և ընկերութիւններից շատերը արել են) զաղարման ժամանակ նուիրել մնացող գումար բարեգործական նպատակին, ազգային բարեգործութեան և այլն, որ մնացող գումարը գալթակցութեան առիթ չը դառնայ անդամների մէջ չուտով գործ գաղաղացելու, գումարը բաժանելու համար

Խմբ.

և ուր, երբ ընկերութիւնը հարկւոր է համարում լրացնել իւր գործադրելի զբաւազրուել, կողմնակի անձնից գուտը ընդունելով, և ան ժամանակ կամ պահպանողական գումարներ որոնք ընկերութիւնը պարտաւոր է յետ դարձնել իմաց սալուց յետոյ մի որոշուող ժամանակ:

§ 11. Անժամանակ փոխ առած գումարի տոկոսները ընդհանուր ժողովը առաջուց որոշում է ամբողջ տարուայ համար, իսկ ժամանակաւոր փոխառութիւնների տոկոսները պայմանաւորվում են միշտ ընդհանուր ժողովի և փոխառիչ փոխադարձ համաձայնութեամբ:

§ 12. Ընկերութեան վերառած պարտքերի և նորան յանձնած փողերի ընդհանուր գումարը ամենաշատը կարող է 5 անգամ աւելի լինել ընկերութեան ստացուածքից, որ համարվում է բազկացած ա) անգամների մասնաբաժիններից, որոնք յիշատի պէտք է հաւաքուած լինեն ընկերութեան մէջ, և բ) պատրաստի զբաւազրուելից: Այս կանոնը տեղիք չունի սկզբնական զբաւազրուել փոխառուելու ժամանակ, երբ նոր է հիմնվում ընկերութիւնը:

§ 13. Պարտքերի և յանձնած գումարների իւր ժամանակին վճարելու համար ընկերութիւնը պատասխանատու է. առաջին իւր տարեկան արգիւնքով, երկրորդ՝ պատրաստի զբաւազրուելով, երրորդ՝ անդամների մասնաբաժիններից, իսկ եթէ այդ բոլորը բաւական չէ բոլոր դոյքով անդամներին, որոնք պատասխանատու են պարտաւորումը առ իւր ընդհանուր երաշխաւորութեամբ: Այդպիսով ընկերութեան հաւատարմութիւնը բաժանվում է անդամների մէջ, իսկ եթէ պատահի, որ անդամներից ոմանք անկարող լինեն այդ վճարելու, այն ժամանակը պատկանողի նոցա վերայ ընկած մասը դարձնալ հաւատարմութիւնը բաժանվում է մնացեալ անդամների մէջ: **) փոխառութեան շափը և ժամանաւորութիւնը:

§ 14. Փոխառութիւնը լինում է միայն ընկերութեան անդամներին ձեռագրով:

Ծանօթ. Անդագդաների ձեռագրերը պէտք է նոցա խնդիրքով ստորագրուին մի ուրիշի ձեռքով. այդ միջոցին պէտք է երկու վկայ էլ ստորագրուին:

§ 15. Իւրաքանչիւր անգամ կարող է փոխ ստանալ իւր ժամանաւորութեան հաւասար գումար առանց երաշխաւորութեան: Աւելի մեծ գումար ստանալու համար նա պէտք է ներկայացնէ ընկերութեան անդամներից այնքան երաշխաւոր, որքան անհրաժեշտ է կանոնադրութեանը նայելով:

**) Յիշում ենք ինչ որ վերելք ասացինք

Խմբ.

ծովի ափին մի առանձնացած անկիւնում, ուր ոչ ոք վերահասութիւն չէր անում նորա աշխատանքին, ոչ ոք չէր հրամայում նորան, թէ ինչ պէտք է սովորենք նա և ոչ ոք չէր խանգարում նորան բայց ծովի մասախաղից, որ երբեմն ծածկում էր նորա աչքից ընդհանրապէս դժուար տեսանկի Միկրոնիս:

Բազմամայ փորձերից և մօտ երեսնամայ աշխատութենից յետոյ, Կոպերնիկը համարեան վաթսուտ տարեկան հասակում վերջացրել իւր լատիններէն լեզուով աշխատութիւնը, բազկացած վեց զրբից երկնային մարմինների շրջանառութեան վերա: Թէպէտ 1530 թուին արդէն վերջացած էր նորա աշխատութիւնը, այնուամենայնիւ ծերունի գիտնականը դեռ ևս ուշացնում էր նրան աշխատելու ի լոյս ընծայելու, որովհետեւ այն միջոցին, երբ նա ամբողջ գիշերներ զննելով էր աստղագիտութեան հիմքերը, Լուսնի փոքրագիտութեան հրդեհը տարածվում էր Գերմանիայում և արդէն ոտը էր կոխել Պրուսիայի երկիրը. այնպէս որ նա չէր կամենում իւր նոր ուսմամբ կրկին խաղիլ Լուսնական երկեղեցու խաղաղութիւնը, քանից որ դարերով սրբազանացած գիտութեան հիմունքը, նա յայտնում էր իւր գիտելը միայն մասնաւոր անձանց, այն ևս իւր բարեկամներին: Սոցանից մինչ էր և Կապուայի Կարդինալ Նիկողայոս Դեաները, որ մեծ ազգանքով թղթատուութիւն ստա-

ցաւ արտադրել նորա գրուածքը: Վիտենբերգի մայրեմարիկայի սրբոֆոսը երկուստեք Ռեալիտիւթ թղթերով իւր ամպլոնը, եկաւ Ֆրանկերնց և երկու ամիս մնալուց յետոյ, առաջին անգամ հրապարակ հանց այդ նոր ուսումը: Այն ժամանակը Կոպերնիկը էլ արդէն չը տեսաւ թող տալու իւր գրքի տղապրութիւնը Նիւրնբերգի գրալատանքից մինչին: Մահուան անկողնում միայն նա արժանացաւ տեսնել իւր գրքի առաջին տղապրած թերթերը. նա ուրախացաւ, շօշափեց նրանց, բայց նորա ժամը լրացած էր արդէն 1543 թ. մայիսի 24-ին եօթնամասնամայ ծերունին յաւիտեան փակել իւր աչքերը: Նորա մարմինը թաղուեցաւ Ֆրանկերնցի եկեղեցու սեղանի մօտ:

Նորա բռնած ընթացքը լայանի ջուղ է տալիս, թէ որքան զգուշ վարուել գիտէր նա իւր ժամանակի հասարակութեան հետ: Իւր գիշերը, տղապրելու ժամանակ, նուիրել նա Պոպոս գ. Լուսնայ պայլին, ամէն տեղ նա աշխատում էր ցոյց տալ, որ երբեք անաստաւածութիւն չէ տիեզերքի տակ: Ժողովրդական մէջ համակարգութիւն և ներդաշնակութիւն գտնելը, այլ ընդհանրապէս աւելի պարզ հաստատում է Պարալի իմաստութիւնը, չը նայելով հաստատ համարումներին իւր յայտնած մտքերի մէջ, այնու ամենայնիւ նա կրթում էր ներանց և նիւ աղբուսութիւններին անունով: Այն

§ 16. Ընկերութիւնը մի անգամից տալիս է մարդուն ոչ աւելի, քան թէ 100 ռուբլի: Այդ գումարը կարող է արուել մի անգամից, կամ մի քանի անգամով, այն պայմանով միայն, որ բոլորը միասին հաւաքուած փոխառութեան ամենաբարձր սահմանիցը չ'անցնի:

§ 17. Փոխառութիւնը լինում է միայն 9 ամսով:

§ 18. Աւելորդ ժամանակ կարող է արուել մի ամիս, միայն այդ պէտք է լինի երաշխաւորների համաձայնութեամբ կամ նոցա տեղը ուրիշներին կարգելով:

§ 19. Փոխ առած գումարները կարող են յետ դարձնել ժամանակից առաջ մասը մասը, առանց յետ ստանալու տոկոսի: Իսկ եթէ այն լրավին յետ դարձնեն ժամանակից առաջ, յետ կ'ստանան նոցա պատկանեալ տոկոսիցը միայն ամբողջ ամիսների համար, որոնք պահաւ կը լինեն մինչև պարտքի ժամանակի լրանալը:

§ 20. Տոկոսը, որ անդամները վճարում են փոխ առած գումարների համար, առաջին երեք տարին որոշվում է 0%: Այդ ժամանակից յետոյ ընդհանուր ժողովը կարող է փոխել տոկոսը:

§ 21. Տոկոսները թէ փոխ տալու և թէ նշանակած ժամանակ յետաձգելու միջոցին պահանջվում է ամէն ամիս համար ամբողջապէս:

Փոխ տուած գումարի ապահովութիւնը և նորա պահանջումը

§ 22. Երբ մի որ և իցէ անգամի փոխ առած գումարը աւելի է, քան թէ նորա մասնաբաժինը, նա ներկայացնում է երաշխաւորներ համաձայն §§ 15 և 16: Իւրաքանչիւր անգամի տրվում է իրաւունք երաշխաւոր լինել մի գումարի համար որ 100 ռուբլից աւելի չէ. այդ միջոցին նա իրաւունք ունի այդ երաշխաւորութիւնը մի անգամից տալ մի անձին համար կամ մասը մասը մի քանիսի համար, բայց այն պայմանով, որ բոլոր երաշխաւորութիւնները միասին աւելի չը լինի քան թէ այն գումարը, որի համար նա իրաւունք ունի պատասխանատու լինել: Փոխ տալու ժամանակը երաշխաւորները տալիս են ձեռագրագրեր, նշանակելով իւրեանց երաշխաւորութեան չափը, անդագդէտ երաշխաւորների ձեռագրագրի տակ ստորագրում են նահանգական զխաւորը քաղ. օրինաց 1562 յօդուածի զօրութեամբ:

§ 23. Եթէ փոխ առած գումարը չը վճարուի վերջին ժամանակամիջոցից մի շաբաթ անցնելուց յետոյ կ'առավորութիւնը բերում է ձեռագրի, որով պահանջում են այն:

ա) Պարտապանի շաբաթական գոյքից:

Գործնով է բացատրվում, թէ ինչպէս այնքան երկար ժամանակ նորա գիշերը ազատ մնաց կաթոլիկ եկեղեցու ամէն յառաջադիմութեան արդիւնք զնոյ անէձքներից, որ ոչ միայն հալածանք չը վերկացրել նորա վերա, այլ մինչև անգամ օգուտ քաղել նորանից Գրիգոր Ժգ. պապի տամարը կաղմելու ժամանակ 1582 թ.: Միայն 17-որդ դարու սկզբներում, եղբիտութիւնը, որ իւր ծայրայեղ իշխանութեանն էր հասել, Կոպերնիկեան ուսումը ճանաչել իբրեւ մի փոսնգաւոր հարուած բոլոր նրա նախապաշարմունքների դէմ և 1616 թուին կարդինալների ժողովը դասել Կոպերնիկի գիրքը նոցա կարգում, որոնք իւրեանց յայտնած անմահ ճշմարտութիւնների համար պատիւ են ունեցել արգելաւորելու: Բայց որովհետեւ այդ գրքի մէջ տրութիւնների համար շատ օգուտէտ մտքեր կային, ուստի և չորս տարուց յետոյ, թող սրտեցաւ նորա կրկին տղապրութիւնը միայն «ճշմարտութիւն» և «միաստ» բառերը փոխարինուեցան «ենթադրութիւն» բառով: Միայն 1821 թ. անտիսլական Լուսնը յետ առաւ իւր անէձքը:

Չը նայելով Լուսնայ դահի դատապարտութեանը Կոպերնիկի վարդապետութիւնը յատաճ դնաց իւր կարգով: Երեւ հարիւր տարուայ ընթացքում Յուհաննէս Կեպլերը, Գալիլէյը, Նիւտոնը, Էբրէնը, և այլ յաջորդ գիտնականները նորանոր քննութիւններ անելով, աւելի կատարեալ դործիքներով,

բ) Երեւութենից, որ վերջին աստիճանի անհրաժեշտ չէ (որպիսի են բաղանիքը, երկրորդ խրճիթը, դարմանի սենեակը և այլն):

գ) Անշարժ կալուածքից, եթէ նոցա տրութեւ անգամը կատարեալ իրաւամբ:

դ) Նորան վճարելի փողերից:

§ 24. Պահանջողութիւնների այն մասերը, որոնք նախընթաց ձեռով չեն ծածկվում ընկնում են երաշխաւորների վերայ, այն չափով, որով իւրաքանչիւրը յանձն է աւել երաշխաւորութիւնը, իսկ եթէ նոցա էլ չը կարողանան վճարել, փոքր առ փոքր ծախվում են և նոցա գոյքը այն կարգով, որ ցոյց է տուած § 23:

Արդիւնքի բաժանումը:

§ 25. Տարուայ վերջին կատարուել իւր կազմում է փոխառութիւնից ստացած տոկոսի ընդհանուր գումարը. այդ գումարից դուրս են դալիս այն տոկոսները, որ ընկերութիւնը վճարում է պարտքի և պահելու գումարներ առնելով կատարութեան ծախսը և պատահական կորուստները: Մնացորդից վերցնում են մի տասներորդը մասը պատրաստի գումարի համար, ինչպէս ասուած է § 7, սորանից յետոյ մնացած գումարը արդէն համարվում է զուտ արդիւնք:

§ 26. Չուտ արդիւնքը բաժանվում է անդամների մէջ նայելով թէ իւրաքանչիւր անգամի մասնաբաժնի որքան մասը գտնվում էր ընկերութեան գանձարանում նախընթաց տարուայ սկզբում: Այդ միջոցի հաշվում են միայն ամբողջ ռուբլիքը:

§ 27. Եթէ մասնաբաժինը արդէն բոլորովին լրացած է կամ մի անգամի տուրքով և կամ փոքր առ փոքր աճելով, այն ժամանակ նորա փոքր հասանելիք շահը արգվում է ուղղակի նորա ձեռքը:

(Կը շարունակվի)

ՆԱԽԱԿ ՄԵԾ-ՇՈՒԼԱԿԵՐԵՑ

Մեծ Դուռաւոր իւրեան հոգի սրտաբերութեան հետ, ժողովարդի մեծ ջանքով հոգի մտկութեան հետ՝ ունի և ամենազգալի մեծ պակասութիւն— ջուրը.— Նորա գետակը առնում է իւր սկիզբը Լաւուարի ստորոտի համեղ աղբիւրներից կամ մի և նոյն է ասել Ուրիթի և Զանաթի գիւղերի ձորերից:*) Թէև Լաւուարի ստորոտի առատաբեր աղբիւրներից յուսայի մեծ ջուր, բայց Լաւուարը չէ բուսական ցանցում գետակին այդ աղբիւրներով, գետակը օգուտ է քաղում իւր արկիւտով բնորոշ Վարա-սու (Սի ջուր) կոչուած աղբիւրներից, սկսած Դեբոսք ասուած վրաց գիւղից մինչև Մեծ-Դուռաւորի անտառները: Այդ անտառները բազկացած, կնիկ կաղին, բնկողներ, խնձորներ, տանձի և ուրիշ սորան նման սպողատու ծառերից, ծածկում է գետակը արեղակի ճառագայթներից և չէ փոխում ջուրը իւր առողջարար յատկութիւնը, այլ երբ փոք-

*) Այդ գիւղերի մասին, ինչպէս խոստացել եմ, յետոյ կ'ըրեմ:

միարեան հաստատուելին նորա գիտողութիւնները, իսկ այսօր նորա դարձել են հասարակաց սեփականութիւն ամէնքի համար և կրկնվում են մեր տանաւանայ մանուկների ընթանում:

Բայց միայն դրանով չի սահմանափակվում այն բազմաթիւ մարդու գործունէութիւնը՝ նա օգտակար էր մարդկութեանը և իբրեւ բժիշկ, աստղագիտական գործիքների հետ միասին շարուած էին նորա սենեակում և ամէն տեսակ զեղեր, որ նա ձրի բաժանում էր չքաւոր հիւանդներին: Նա թողել է և մի նկարագրութիւն Պրուսիայի լատինական լեզուով:

Այդպիսի բազմակողմանի կեանքի վերջին բուսակները յիշաւի կարող էին քաղցրացած լինել այն զգացմունքով, որ նա ի զուր չէր ապրել աշխարհիս երկայնի: Թող Գերմանիան ու Լեհաստանը վիճեն նորա ծագման մասին, թող Վարաւում և Թորնում կանգնած արձանները հաստատեն նորա լինելի կամ գերմանացի լինելը, իսկ մնաց, ամբողջ մարդկութեան հետ միասին պէտք է չորհահալութիւն անելը այն մեծ, բայց համեստ մարդուն, որ առաջին անգամ ամենապայծառ դադարաբեր տուեց տիեզերքի կազմակերպութեան վերայ, որովհետեւ և ամէն մի քայլը գէ պի ճշմարտութիւն է, մի և նոյն ժամանակ մի քայլ գէ պի ազատութիւն:

Ն. Լ.

